

# ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

|                                                                                                                                                                |                                                                                                                                                         |                                                        |                                                                                                                                                                                                                          |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ<br>Ներկայ 1897 տարեդրամի<br>Փողկարկոյ ձևմար տարեկան 10ֆր<br>" " " 1/2 " 5 "<br>Արտասահմանի համար " 12 "<br>" " " 1/2 " 6 "<br>Կանխիկ վճարելի | Նախակ դրամ եռայն խրկել հետևեալ հասցեով<br>ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՓԱՂԱՔԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՅ ԿԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)<br>Редакция на вѣстникъ<br>„Иравункъ“<br>ВАРНА (България). | Rédaction du journal<br>„Iravounk“<br>VARNA (Bulgarie) | Խմբագրության ուղղեալ գրութիւնը<br>ետ չեն դրկուիր եւ յարմար դատ-<br>ոշանքներն միայն կը հրատարակ-<br>ուին ամբողջովին կամ մասամբ:<br>Ծանուցմանց տողը 20 տւերիւն.<br>երեքէն աշնի անգամներու համար<br>20 աւ 100 գեղը կը լինի: |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|

## ՁԱԽՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ

Կեանքի մէջ մերձեցում մը առաջ բերելու միակ միջոցն է փոխադարձ քաղցրութիւնը: Այս օրէնքը կը տարածուի ընկերա-կան ամէն շրջանակներու ամէն տեսակ գործերու վրայ: Խնդիրը անհատական ըլլալ թէ հանրային, երբ երկու անձեր կամ ընկերու-թիւններ իրարու մօտեցաւ ձգտին, միասին ապրելու կամ նոր զարկ մը տալու իրենց գործերուն, կը տեսնենք թէ կանխապէս ի՞նչ գուրգուրանք կը ցուցնեն իրարու հանդէպ, մեծարանքի ի՞նչ լսա-քեր կը փոխանակեն, վերջապէս ի՞նչ ճիգեր կը թափեն որպէս զի համարում եւ յարգանք գոյանայ մէջերէն, վստահութիւն սփռու-ի, եւ գետինը հարթուելով մնացեալը ինքնին կատարուի:

Շատ անգամ, իրիւր այս փա-փաքելի փոխակին հասցնելու նը-պատող երրորդ մը կըլլայ, ուրուն կարեւոր դերը անուրանալի է ու եւ գաշինքի մը կնքման պա-հուն, ըլլալ այդ գաշինքը ամուս-նական, առեւտրական, կառավա-րական եւ կամ ուրիշ տեսակէ:

Այս երրորդը միջնորդն է: Ասոր գործը շատ ներամուտ-թիւն կը պահանջէ: Երկու կող-մերու բարեմասնութիւնները իրա-րու հասկցնել, փոքրիկ անհամա-ձայնութիւններու վերջ տալ, ու-րիշներու առաջն տունել, միջ-նորդին կը վերաբերին:

Այսօր, եթէ ընկերային սան-դուլը դիտենք, պիտի տեսնենք որ ամէն տեղ միջնորդներու կը հանդիպինք՝ խոնարհագոյն գա-սակարգէն սկսեալ մինչեւ ամե-նաբարձր եւ պաշտօնական շրջա-նակները:

Եթէ կանխապէս երկու գաշ-նակցելի կողմերը վերեւ յիշուած հաճոյակատարութիւնը ցոյց չը-տան իրարու նկատմամբ, եւ ընդ-հակառակն անտարբերութենէ ա-ւելի անտեղի բան մը՝ արհամար-հանք յայտնին իրարու, եւ եթէ միջնորդին ապիկարութիւնն ալ

բարեւոյտ այս չարեաց վրայ, յայտնի բան է թէ մերձեցումը կը վրիպի եւ վերջնական խզումը ան-խուսափելի կը դառնայ:

Այս ընդհանուր տեսութիւնը այժմ մասնաւորեալ մեր խնդիր-ներուն վրայ: Միութեան խնդիրը կ'ակնարկեմ:

Յայտնի անձնաւորութիւններու խմբակ մը չունեցանք, գէթ վեր-ջին տեսներս, որոնք լրջօրէն աշխատէին այս մեծ գործը զրու-հանելու, բռնաւոր միջոցներ ի գործ դնելով:

Այժմ հրատարակուած թերթ մըն է որ խնդիրը ձեռք առաւ, եւ գործի ձեռնարկեց երբեմն ար-դարացի, եւ առ հասարակ նախա-տական սլաքներ արձակելով կու-սակցութեանց երեսին:

Այս միջնորդութիւնը կուսակ-ցական ըլլալու երեսովն ունէր. միջոցները յուր էին. ձեռնարկը վրիպեցաւ:

Այժմ տրձագանգը վառնաի մէջ եւս անգրադարձաւ: Միութեան փափագողներու վարչու-թիւն մը կազմուած էր, քոյի տակ ծածկուած:

Չեմ հասկնար թէ այսպիսի ազ-նիւ իզձ մը ունեցողները ի՞նչ պատճառներ կրնային ունենալ պահուելու: Ասիկա առաջին սխալն էր որ ձեռնարկը ակներեւ-ւարար պիտի վրիպեցնէր: Այս տեսակ հաշտարարի միջնորդու-թիւն ընողները, ամենէն առաջ պէտք է որ իրենց երեսին գոյնը ցուցնեն, եւ ասոր պատճառները մէկէ աւելի են:

Այժմ յետահայեաց ակնարկով մը աչքի առջեւ բերենք այս վար-չութեան գործածած միջոցները եւ ձեռք բերած արդիւնքները:

Միութեան վարչութիւնը կեանքի նշան տուաւ յայտարարութեամբ մը, որուն իմաստն էր «գողեր, միացեք»:

Այսպիսի ձախող սկզբնաւորու-թիւն մը անշուշտ ձախող ար-դիւնքներ միայն կրնար առաջ բե-րել:

առաջ բերէին, պայմանաժամ մը որ նամակի մը պատասխանն ստա-նալու անգամ՝ անբաւական էր: Ժամանակի այս ազդեցութեամբ, վարչութիւնը ինքնին անկարող-թեան մատնած կըլու ամենէն բար-եացական գործիչներն իսկ:

Թողունք այն սպառնական նա-մակները զորս վարչութիւնը սըփ-ւեց ամեն կողմ, եւ դառնանք այն օրուան ուր, իր հրաւերով, բա-նակցութիւններու անդրանիկ ժո-ղովը գումարուեցաւ եկեղեցիին բակը: Դաշնակցականները չմտ-նակցեցան այդ ժողովին, գուցէ այն պատճառաւ որ իրենք մտա-ծեցին թէ մարդկային արժանա-պատուութիւնը չէր ներքը ընդու-նելու հրաւերն անոնց՝ որոնցմէ կանխապէս նախատուած էին:

Չախող յայտարարութեան հե-տեւանքն էր: Արդէն աշխարհի մէջ տեսնուած չէ որ այս բնութիւնը ունեցող բանակցութիւնները հրա-պարակային ըլլան:

Վերականգնող Հնչակեանները, նուազ դերազդեած եւ աւելի անյի-շաշար, թէեւ հաւատարմապէս նա-խատուած միութեան յայտարա-րութեամբ, սակայն հրաւերն ըն-դունեցին. իրենց ներկայացուցիչը, այն տեսն քաղաքս ներկայ, բեմ կ'ընէ:

«Յեղափոխական գործիչները գէշ մարդիկ են, կըսէ, պէտք է ամենքն ալ հեռացնել»:

Խոստովանեցէք թէ անյաջող սկզբնաւորութիւն մըն էր այս՝ Միութեան առաջ բերել ուղղով մը համար:

Եւ որպէս զի Դաշնակցական-ները կարծել չի տան թէ կը խուսափին բացառութիւնէ, ինք-նաբերաբար շրջաբերականով մը ժողովուրդը կը հրաւիրէին նոյն բացօթեայ ժողովատեղին, յա-ջորդ կ'երակի օրուան համար: Միութեանը գրգռուած էին, եւ կրնային այնպիսի ցուաղի գէպ-քերու տեղի տալ, որոնք փափուկ կացութեան մը մատնէին վառ-նայի եւ գուցէ ամբողջ Պուլկարի-ոյ հայ գաղթականութիւնը, երբ թաղ. խորհրդոյ մէկ յոյժ իմաս-տուն կարգադրութիւնով, այս

գումարումը արգելուեցաւ:

Այն ատեն դաշնակցականները Թաւուշիկ մը հանեցին հրապա-րակ, որ պարզելով միութեան համար եղած պաշտօնական ձեռ-նարկները, ամենէն կծու եւ ան-վայել ածականները կը շուրջէր անոնց «որոնք Միութեան քոյին տակ, յեղ. կուսակցութիւնները ընդհանրապէս, եւ ի մասնաւորի Դաշնակցութիւնը արատաւորելու ջանքեր կ'ընեն»: Աւելորդ է ը-սիլ որ այդպիսի հայհոյակց գրու-թիւն մը բնաւ պատուաբեր չէր դաշնակցութեան: Դժբախտաբար որքան կը խորշինք, այնքան ա-ւելի կը հանդիպինք այդ շրջա-բերականներուն, որոնք ժողու-վուրդը տխրութեամբ եւ զգուան-քով միայն կը համակեն:

Վերականգնող վերջին շրջա-բերականը, այնքան տարբեր իր վերջնութիւնը չափաւոր շրջաբերա-կանէն, այնքան բարկութեամբ գրուած էր որ մինչեւ անգամ կա-ղութիւնը աղղին դէմ դաւաճա-նութեան ոճիւր կը հռչակէր:

Սակայն ամենէն քննադատելին անոնք են որ ձախող միջոց-ներով Միութեան առաջ բերելու կեղծն եւ կը յաջողին միայն վերջ-նական եւ անդարմանելի խզում-ներ պատճառել:

Եթէ ուրիշ քաղաքներու մէջ ալ, ուր կուսակցութեանց անգամ-ները սերտ բարեկամութեամբ մը կապուած են իրարու, այս տեսակ Միութեան վարչութիւններ ծնէին, յայտնի բան է որ Միութիւնը յաւիտեանս անկարելի պիտի դառ-նար:

Այս պայմաններուն մէջ, Միութեան վարչութիւնը շատ երախ-տապարտ պիտի թողու Աղզը եթէ բարեհաճի իր գործունէութեան վերջակէտը դնել, թողով որ պաշ-տօնական բանակցութիւնները ուրոնք, ինչպէս յայտնի է, որդէն սկսած են, իրենց օրինաւոր ըն-թացքը շարունակեն:

Եւ կամ, եթէ այդ բանակցու-թիւնները վրիպին իսկ, աւելի ձեռնհասներու թողուն այդ նուրբ գործը, որպէս զի անոնք աւելի բանաւոր միջոցներով ասպարէզ

եղին, լոյսի մէջ: Այն ատեն միայն մէկ կուսակցութիւն մը պիտի գտնուի Հ. Թաղափոխութեան վարիչ, մէկ մարմին մը, լաւագոյն տարբերէ կազմուած, ինչ որ բո- վանդակ ազգին իղձը կը կազմէ:

Գաւառ-Արշալիր

## ՀԱՅԵՐՆ

Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ՊՈՒԼԿԱՏԻԱ

Գ.

## ԲԼՕՎՏԻՎ (ձիւղիպէ)

(Շար. նախորդ քիւէն)

Վարժարանները ունին վեց տա- րեւը կամ կարգ և բարձրագոյն նախակրթարանի մը ծրագիրը, որ պատրաստուած է Ուսումնական խորհուրդի ծրագրին հետեւողու- թեամբ:

Մինչև ինչ տարեկան հասակը մանկապարտէզ յաճախող տղան եթէ վարժարան մտնելով կանոնա- ւորապէս կատարէ իր ուսման ըն- թացքը, չընանաւարտ կըլլայ տասնհինգ տարեկան հասակին մէջ, և եթէ ուղէ այնուհետեւ պե- տական վարժարան մը մտնել, կրնայ ընդունուիլ պուլկար երկ- րորդական վարժարանի մը եր- րորդ կարգը, վասն զի այս նպա- տակով բաւական խնամք կը տար- ուի պուլկարիքէն լեզուին ուս- ման, որով կաւանդուին մէկ քանի դասեր վերին կարգե- րուն:

Այս ամէնը շատ լաւ է և նպա- տակաւոր: Միայն թէ ուսման ծրագիրը ունի իր բարեփոխելի կէտերը, և հետեւաբար կարօտ է վերաքննութեան:

Օրինակի համար, զարմանքով կարգացի ծրագրին մէջ որ բարձ- րագոյն կարգին կը բացատրուին մարդկային հոգիին անմահութեան ապացոյցները: Հոգիի անմահու- թիւնը իբր հայկական եկեղեցիին հաւատալիքներէն մին՝ հարկ է անշուշտ ֆերստոնէականի դասե- րուն հետ աւանդել աւելի ստորին կարգերուն: Սակայն այդպէս չէ բարձրագոյն կարգին համար ու- րուն այդ դասերը ալ չեն աւան- դուիլ և որ արդէն գիտական ծա- նօթութիւններ տալով ըլլալով, իր դեռահաս մտքի զարգացման համար անհրաժեշտ պէտք ունի ճանդգնաւոր սորվելու, տրամաբա- նելու իր գիտական փոքրիկ պա- շարին վրայ հիմնուելով: Եւ չեմ կարծեր որ Բլօվտիվի հայ ուսու- ցիչները, եթէ իրենք հոգիի ան- մահութիւնը գիտական փաստերով ապացուցանել կարենալու յաւակ- նութիւնն ալ ունենան, կարող ըլ- լան իմաստասիրական այնքան մեծ և դժուարին խնդրի մը քննու- թիւնը մատչելի դարձնել 14-15

տարեկան տղու մը մտքին հա- մար:

Այսօրինակ զբաղումներով տղուն միտքը աւելի կը մոլորի քան կը լուսաւորուի:

Ծրագրին բարեփոխելի կէտե- րէն երկրորդ օրինակ մըն ալ:

Այդպիսի պատմութիւնը մինչև Գ. կարգը կաւանդուի և այնու- հետեւ կը դադարի. ուրիշ խօսքով, տղան մինչև իր 12 տարեկան հա- սակը միայն կը սորվի այդ այն- քան էական ուսումը, որ՝ ըստ իս՝ իբր տղուն մէջ ազգ. ոգին դար- գացնող ուսում, պարտի շարու- նակուիլ ազգ. նախակրթարանի մը մինչև բարձրագոյն կարգը:

Վարժարաններուն տարեկան ար- ձակուրդին ժամանակն ըլլալով, չի կրցի ներկայ ըլլալ դասախօսու- թեանց. սակայն եթէ առած տե- ղեկութիւններս ստայդ են, դասե- րուն աւանդման եղանակները շատ չեն համապատասխաներ մանկա- վարժութեան արդի պահանջնե- րուն: Մեղք:

Բախտաւոր պիտի համարեմ ինք- զինքս եթէ այս գիտողութիւնները հասնին իրենց նպատակին, որ է Բլօվտիվի վարժարաններուն Պատ. Հոգաբարձութեան և յարգելի ու- սուցիչներուն առիթ տալ ձեռնոր- կելու ծրագրական կամ՝ այլ բա- րեփոխութեանց, զորս կը պա- հանջեն Պուլկարի մէջ առաջնա- կարգ դիրք գրաւող քաղաքի մը հայ մանկութեան ամէնէն կենսա- կան շահերը:

1883ին Բլօվտիվի հայերուն մէջ հաստատուած է Գրասիրաց Եղ- բայրութիւնը, ընկերութիւն մը, որուն նպատակն է ընթերցասիրու- թիւնը տարածել և որ այսօր 6-700 կտոր գիրք ունի, ինչպէս նաեւ մօտ 1,500 ֆրանքի պատ- րաստ գումար մը: Գրատունը նախ վարժարանին մէջ էր, ուրիշ փա- փազույնները դրքերը կանէին՝ կար- դալէ յետոյ զանոնք վերադարձնե- լու պայմանաւ: 1893ին Եղբայ- րութիւնը բացաւ լաւրան մը յա- տուկ շէնքի մը մէջ որ միանգա- մայն իբր ընթերցատուն կը ծա- ռայէր. ընթերցողներու թիւը ի սկզբան բաւական մեծ եղած է, սակայն յետոյ տակաւ պակսեր է, երբ Գրասիրաց Եղբայրութիւնը ընթերցարանին վարի յարկը զբօ- սարանի վերածելով թոյլատրել է թուղթ, նարտ ևն. խաղալ, այն- պէս որ հուսկ յետոյ ընթերցա- րանը առանց յաճախորդի մնացել և հարկ է եղեր զայն բոլորովին փակել զբօսարանին հետ:

Այժմ Եղբայրութեան զրգերը վերստին փոխադրուած են վարժա- րանը և ընկերութիւնը մտադիր է մօտեցնել գետին մը գնել և անոր վրայ կառուցանել մէկ կամ երկու սենեակ իբրեւ ընթերցատուն:

Բլօվտիվ ունի ուրիշ ընկերու- թիւն մըն ալ Դպրոցասիրաց ա- նունով, որուն նպատակն է աղքատ դպրոցականներու ձրի հայթայթել

գիրք, թուղթ և գրիչ և որուն սեփականութիւնն եղող տան մէջ այժմ կը բնակին հայ գաղթա- կաններ:

Այս երկու ընկերութիւններն, ինչպէս արդէն յիշատակեցի, վար- ժարաններու կառուցման ժամա- նակ բաւական կարեւոր գումար- ներ նուիրած են շինութեան ի նպաստ:

Պոլսոյ Նորգին պատճառաւ Բլօվ- տիվ ապաստանող հայ գաղթական- ներուն թիւը 1,100ը անցած չէ, որոց 300ը միայն չքաւոր: Ասոնց օգնելու համար տեղացի ազգայինք ֆանձնաժողով մը կը կազմեն որ առաջին հանգանակութեամբ մը 1,500 ֆրանք կը հաւաքէ. այս գումարը տակաւին չէր սպաւած, երբ երոպական մարդասիրութեան օգնութիւնը հասաւ Միսս Ալէնի և Սըր ու Լէտի Ուիլիամ Հէյթըրի ձեռքով:

Հիմա 30 աղքատ գաղթական ընտանիքներ միայն մնացած են, երեք տան մէջ ապաստանած և գրեթէ ամէնքն ալ յաջողած են զիրենք ազէկ քէշ ապրեցնող դա- ղում մը գտնել:

## ԹԱՏՐՈՆ

(Բաժնի «Սարի» անհայ գրութից մի գլուխ)

Վարագոյրը բարձրանում է, թատրոնական բեմը ձեւաց- նում է մի սքանչելի տեսարան, որ պատկերացնում էր ծերունի Հայաստանը իր տխուր և տըր- տում կերպարանքներով: Հիւսուհի, հսկայի նման կանգնած է Արա- ռատ սարը, նրա չորեք կողմում տեսանելի են քանդուած քաղաք- ների և դիւղօրայից աւերակներ, որոնց վերայ տիրում է յաւիտե- նական խաւարի թագաւորութիւ- նը: Երկնքից նայելով միայնակ թռչում է այն մահահրուէր տա- րածութեան վրայ, Երկար թռչե- լուց յետոյ նա նստում է աւեր Հայաստանի փլատակների վրայ, նա սկսում է մտածել... նա մտածում է նորա միւս անգամ շինութեան մասին:

Թատակագիծը ծրագրվում է, նիւթը պատրաստվում է, ոգին կամենում է ձգել շինութեան հիմքը: Երեւան են լինում չորս մանկահասակ հերոսներ: Նոցա ամէն մինը բերում է մի ահագին քար, դնում է լինելոց շինութեան յատակագծի մօտ, ստելով. «ա- հա՛ շինութեան անկենաքարը, դորա վերայ պիտի դրուի հիմքը»:

Այդ քարերը ունէին անաղան գոյն ու զանազան ձեւեր: Նոցա նից մինի վրայ դրուած էին այս խօսքերը. «Անտառաւ կամ կը- ռօնական կեանք»: Միւսի վե- րայ. «Դպրոցներ կամ իմացա- կան կեանք»: Երրորդի վերայ.

«Հող կամ նիւթական կեանք»: Զորորդի վերայ. «քաղ եւ գա- ռազան կամ քաղաքական կեանք»:

Ոգին կամենում է ձգել հիմքը, հերոսներից ամէն մինը իր քարը առաջ է մղում, պահանջելով թէ պիտի լինի գլխաւոր անկենաքա- րը: Բարձրանում է վէճ և աղ- մուկ: Նոցա սկսում են միմեանց հակաճառել: Երկուստեան գործը մնում է անշարժ:

Մինչ դրա այդ խռովութեան մէջ էին, երեւան են լինում հե- րոսների մի նոր խումբ, սեւ հա- զուստներով, երկայն մօրուքնե- րով և կատաղած ու փրփրած բե- րաններով: Նոցա գլուխով բերում են մի ահագին անտաշ քար, յա- լիտենական հնութիւնից սեւացած և բորբոսած, որի անհարթ մա- կերեսով վերայ հաղիւ կար- դացվում էր բառս, «խաւար կամ մեռելային կեանք»:

«Կորէ՛ք, լաւտոնե՛ր, գոռա- ցին նոքա դէպ առաջին չորս մանկահասակ հերոսները, յաւի- տանից այդ աւերակների հիմքը դրուած է եղել այս սրբազան քարի վերայ, դարձեալ սորա վե- րայ պիտի հաստատուի նորոգ շի- նութիւնը»:

Մանկահասակ հերոսները լնդ- դեմանում են նորանց: Կուրը և խռովութիւնը սաստկանում է, շինութեան ոգին յուսահատուելով աներեւոյթանում:

Նոցա խռովութեան և աղաղա- կի ձայնը հասնում է երկինք. դիք լիջնում են ցած, Արարատայ գա- գաթի վերայ տեսան է կաղմուած: Երկայն մօրուքաւոր ծերերի լողքը հասնում է մինչ տարտա- րոս, անգունդը բաց է լինում, յանկարծ երեւան է լինում իւր ստորերկրայ խումբերով, մահու ու խաւարի թագաւորը. — սար- սափելի Պուտոնը:

Ծերունիքը ուրախութեամբ դի- մում են իրեանց պաշտպանի ա- ռաջ և տարածվում են նորա ոտ- քի տակ և գետին են համբու- րում:

«Կորէ՛ք, անիրաւնե՛ր, գո- ռում է խաւարի թագաւորը, դէպ մանկահասակ հերոսները, դուք, լիբր լակոտնե՛ր, մարանչում էք իմ իշխանութեան դէմ: Ես ինքս իմ ձեռքով դուրս հանելով տար- տարոսի կամարներից երկու քար, ձգեցի աշխարհ, մինը անցաւ Ա- րարիայում, որի վրայ դրուած է այժմ Մեքէայի սրբարանի հիմքը և միւսը Հայաստանը, որի վերայ առաջ դրուած էր և այժմ նոյն- պէս պիտի դրուի նորա շինու- թեան հիմքը»:

Մինչ Պուտոնը բարկացած կամէր իւր երեքարկէնի հարուա- ծով գլուխը չորս մանկահասակ հե- րոսներին դէպ անդունդը, յան- կարծ Հերմէսը վերայ է հասնում: Նա ամոքում է մահու արքայի բարկութիւնը և հրաւիրում է նո-

բան Արարատ, ուր դիք խորհուրդ  
ունենին և նորան սպասում էին :

Մի քանի րոպէից յետոյ, յայտ-  
նովում են Ապոլոնը և Աթենասը :  
Նոքա կարգում են դից վճիռը ,  
որով սեւ զգեստաւոր ծերունիքը  
գատապարտվում են դէպ յաւիտե-  
հական կորուստ , իսկ մանկահա-  
սակ հերոսներին ասում են .  
« դուք չորեքեանքդ միմեանց  
եղբայր էք , Ձեր չորս քարերը  
պիտի դրուին չորս անկիւններում »  
և նոցա հիմքի վերայ պիտի  
բարձրանայ շինութիւնը : »

Երեւան է լինում դարձեալ չի-  
նութեան ոգին : Եւ վարադոյրը  
ցած է իջնում : Թաաբոնի մէջ  
հնչում են ծափահարութիւններ  
և « կեցցէ՛ յաղթութիւն » , « կեց-  
ցէ՛ նոր սերունդ » :

Իսափի

### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

— — —

Մարտի 13 Յուլիս

Ձգւում համար այն մահաշունչ  
հոսանքը որ խեղճ հայերը կը մղէ  
դէպ Ամերիկա , պէտք է քանի մը  
օր Մարտի 13 ըլլալ . նաւահանգստի  
մօտ գտնւող օթէշներու պատերն  
հայ տաւերով լեցուած են . . .  
« Եկա՛յ Մարտի 13 , եւ կը լինի  
Ամերիկա » : Հազիւ կը հանդիպին  
Ամերիկայէ վերադարձողներու ,  
խեղանգամ , ծիրած , և կամ ծիւ-  
րացուցիչ ախտով մը վարակուած  
գաղթականութեան , որ մահ կըս-  
պառնայ հայ անհատներու և ըն-  
տանիքներու :

Փարիզի Շարիթէն ալ դոցուե-  
ցաւ . բաւական թուով հայեր հոս  
եկան , ցրուելու համար չորս կողմ .  
կան թուրքիա վերադարձողներ ,  
սակայն տեղոյս օսմ . հիւպատոսը  
անցագիր չիտար :

Եկողները շատ գոհունակութիւն  
կը յայտեն փարիզի Շարիթէի  
մասին . ցարդ ուռետա , ամեն ինչ ա-  
ռատաբար նուիրուեր է իրենց . այդ  
առատութիւնը մանաւանդ վերջին  
անգամ չորաչար գործածուած կը  
տեսնեմ քիչ մը . տեսայ երիտա-  
սարդներ մարտը , վայելուչ հագ-  
ուած , շուշուրեման լուման գըր-  
պանին . սակայն չեմ կարծեր որ  
այդ նպատակով տրուած ըլլայ ի-  
րենց . խիղճ չին ընել ճամբու  
ծախքի յաշկացուած գրամը մըս .  
խելու հոս ու հոն :

Մտիկ ըրի երիտասարդ մը իր  
ինչ տեսակ անձ ըլլալը առաջուց  
գիտնալու համար հաւատ չեմ  
ընծայեր առասպելական շահատա-  
կութեանցը : Սա իրողութիւն է  
թէ , արհեստը մէկգի թողած ,  
ազգին շնորհիւ կը թափառի Պու-  
կարիա , Ռուսիա , Եգիպտոս ,  
Յունաստան , Իտալիա , Յիւստոս ,  
Սպանիա , Անգլիա , Կիպրոս ,  
Չուիցերիա , Պելժիա ևն . և ինչ  
միտող մը . 5 օրուան մէջ 20-25

Ֆրանք լոկ իր հաճոյից գործածեց  
հոս . մինչդեռ ինք 35-40 ֆրանք  
կըսէ չափազանցելով : Շառիթէի  
ստակն է այս : Ինք փարիզէն կու-  
գայ շատ մաքուր հագուած :

Հիմա կը դիմէ քահանային , որ  
իրեն կէս տոմսակ առնելով զրիկէ  
զինք Ռուսիա :

Հոս վաճառականներէն զատ կան  
բաւական հայեր որք միջնորդու-  
թիւնով կապին : Կան տղուկ-  
գործակատարներ ալ որ նաւէն շու-  
գեկաւք կառաջնորդեն այն հայերը  
որոնք պիտի երթան հիւսիսային  
նաւահանգիստ մը , կորստեան աշ-  
խարհը-Ամերիկա :

Անցեալ օր փողոցի մը մէջ կար-  
դացի հայ տաւերով « Հայկական  
պանդոկ » բառը և պանդոկապետ-  
ներուն անունները , ճիշդ այն օրը  
տեղի ունեցիւ է սա դէպքը .

Հայ երիտասարդ մը բարեկա-  
մի մը միջոցով կառնէ շոգենաւին  
տոմսը , և պանդոկի վարձքը վճա-  
րելով պիտի մեկնի . պանդոկա-  
պետները կարգիւն զինք , որոշ-  
եալ դինէն աւելի դրամ պահան-  
ջելով :

Պատճառ . որովհետեւ տոմսը  
իրենց միջոցով չէր առած : Կա-  
ռածը չկործէք . նաւը մեկնեցաւ  
տղան մնաց տոմսակը ձեռքը , և  
դեռ կապանէ : Կը դիմէ նաւային  
ընկերութեան , եղբուրթիւնը կը  
յայտնէ , ու անոնք կուղեն խեղճ  
երիտասարդին իրաւունքը պաշտ-  
պանել , անոր կրած աւելորդ ծախ-  
քերը պահանջելով այդ հայ պան-  
դոկապետներէն :

Ուրիշ պանդոկ մը , Օթէլ տ'Առ-  
մէնի , երեք հայերու և ֆրանսացիի  
մը միջև վէճի մը առարկայ դու-  
րած է . դատարանը շուտով կը  
վճռէ . ասանկ դէպքեր լաւ տպա-  
ւորութիւն չուն փոքր օտարին վրայ .  
հայերը պէտք է համակրելի ըն-  
թացք մը բռնեն ամենուրեք :

Տ. Ա.

### ԼՐԱՔԱՂ

Բիզանդիոնի վերջին թիւերէն մէ-  
կուն մէջ կը կարդանք հետեւեալը .

Գալով օրակարգի միւս մեծ  
խնդրին , այն է՝ օտարաց ձեռքը  
գտնուող որբերու վիճակին , Մի-  
սիոնարական Համաժողովին ծա-  
նօթ Որոշմագրէն ետքը , մենք  
մեր մասին՝ փակուած կը նկա-  
տենք այդ խնդիրը : Բայց ամէն  
զգայուն և խղճամիտ ընթերցող ,  
հայ ըլլայ թէ օտարազգի , հար-  
կաւ ցաւ զգաց . Անտաքիոյ աշխ-  
դիտողութեանը թէ « Միսիոնար-  
ներէն դանդաղող հայ ժողովուրդն  
ի՞նքն ինչ ըրաւ իր որբերը պա-  
տըպարհելու և կրթելու համար » :  
Կենթադրենք թէ Անտաքիոյ  
նորընտիր յարգելի տնօրէնը նոր  
եկած է Ամերիկայէն և տեղեկու-  
թիւն չունի թէ իր ակնարկած  
ժողովուրդ տնտեսական տագնապ

բաւած իրական վիճակ մը ան-  
ցուցած է , որ պինք անկարող  
կընէ շատ մը բարեգործական  
պարտաւորութիւններու կատար-  
ման : Իր աւուր հային համար  
ամիսներէ հետէ այլոց նպատակն  
կարող մնացող տարր մը ի՞նչպէս  
կրնար մէկ օրէն միւսն որբանոց-  
ներ հիմնել իր որբերը դատար-  
արակիւ համար : Եթէ այնպիսի  
տագնապ մը Ամերիկայի ժողո-  
վուրդին վիճակած ըլլար , ո՞ր  
կը մնային , ի՞նչ կրնային ընել  
Պորտն և իր միսիոնարք : — Ան-  
տեղի է նաեւ Արեւելեան Միսիոն  
վերջին թիւին մէջ յօդուածագրի  
մը այն խակ դիտողութիւն թէ  
« Եթէ Միսիոնարներուն տուած  
կրթութենէն զո՞հ չէք , առէ՛ք  
ձեր որբեր և դու՛ք նայեցէք » :  
Եթէ ազգը կարողութիւն ունե-  
նար իր բոլոր որբերն ինք նայե-  
լու , օտարները Միսիոնարներուն  
դրամ չէին տար « Հայ ազգին որ-  
բերը նայեցէք » ըսելով : Բայց  
այս դրամ Միսիոնարներուն այն  
նպատակաւ չի տրուիր որ հայ  
տղոց կրօնքը փոխեն : Ազգին ալ  
ըսածն այս է ահա : Մնաց որ  
Միսիոնարներն իրեց Որոշմագ-  
րով ընդունեցին թէ Ազգին իր  
Մ. Պատրիարք հօր բերնով և իր  
ազգային մամուլին միջոցով ըրած  
պահանջումը կատարելագէտ բա-  
նաւոր և քրիստոնէական չէ :

### ՄԵՃՏՈՒՏՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Գ Ի Շ Ե Ր Օ Յ Ի Կ

— — —

Վարժարանս որ արդէն հանրա-  
ծառնօթ է կ . Պոլսոյ մէջ ունեցած  
իր արգիւնաւոր գործունէութեամբ  
ըր , ծանօթ դէպքերու պատճա-  
ռաւ դադրած ըլլալով , այս ան-  
գամ վառնայի մէջ պիտի վերա-  
հաստատուի յառաջիկայ սեպտ .  
15 էն սկսեալ :

Վարժարանին ծրագիրը բարե-  
փոխուած է համապատասխան երկ-  
րին հանգամանքներուն , և մեծ  
դիւրութիւններ կընծայէ այն ա-  
շակերտաց որոնք փափագին յա-  
ռաջիկային պետական բարձրա-  
դոյն դպրոցներու մէջ իրենց ու-  
սումը շարունակել : Առ այս  
Պուլկարերէն լեզուն մեծ տեղ կը  
բռնէ յայտագրին մէջ հաւասար  
Մայրենի և ֆրանսերէն լեզուաց :  
Իսկ օսմ . լեզուի ուսումը պար-  
տաւորիչ է միմիայն թուրքերէն  
գալիք ուսանողներուն : Մեծ հոգ  
կը տարուի նաեւ նախնական և  
երկրորդական գիտութեանց , դըպ-  
րութեան և գեղարուեստի ճիւղե-  
րուն :

Կընդունուին միմիայն գիշերօ-  
թիկ աշակերտներ որոնք ընտա-  
նական ինամքի և հոգածութեան  
առարկայ են : Տարեկան թոշակն  
30 օսմ . ոսկի . վեցամսեան կան-  
խիկ :

Տնօրէնութիւնը կը յաւայ թէ

Պուլկարիոյ հայ հասարակութեան  
կողմանէ եւս պիտի գտնէ այն  
շերմ համակրանքը զոր կը վայե-  
լէր թուրքիոյ մէջ , և այս ակըն-  
կալութեամբ կը խնդրէ այն պատ-  
ժնոյքներէն որոնք կը փափաքին  
իր խնամոց յանձնել իրենց զա-  
ւակաց դաստիարակութիւնը որ  
հաճին մինչեւ յառաջիկայ սեպտ .  
1 անձամբ կամ նամակով պէտք  
եղած դիմումն ընել , աւելի ման-  
րաման տեղեկութիւններ քաղե-  
լու համար , առ հիմնադիր Տնօրէն

Գ. Պ. Միշտոնաձեան  
Oulitza Botéva, 82. — IV  
Varna (Bulgarie).

### ԿԵՆՃ ԹԻՒՐԲԻԱ

— — —

Պուլ Ինվանը մահուտէսի իլէ  
վազըթ վազըթ պաշ կէօսթէրէն  
պազը թիւրքէր , կէօսա թիւրք  
հիւքիւմէթին իտարէսինտէն նէֆ-  
րէթ իտէրէք , խարիճէ չըգուպ  
մէթիւպէր վէ կապէթալար վէ  
սայիր նէշրիաթլարլէ եւ Սուլ-  
թանըն , եւ Պապը Ալինին վէ  
հախօտ ումում օսմանլարըն ի-  
տարէսի ալէյհինէ շէտիտ լիսան  
իսթիմալի իլէ , ումումէն իյգա  
օլընան ճինայաթ ու պարպար-  
լըգլարըն մէսուլիյէթի պազը  
պէօյիւք մէմուրլարա աթֆ իտէր-  
լէր Պուլկարըն մաքստլէրի թիւրք  
գալմընըն վահշէթ ու խապասէ-  
թիւի էօրլմէք վէ պիր թարաֆ-  
տանտա թիւրքլէրին խուսումէ-  
թիւի էնվայի թէրթիպլէրլէ խը-  
րիսթիյան վաթանտալարըն ալէ-  
հինէ թէշլիդ իթմէք վէ նիհա-  
յէթ տիկէր թարաֆտան տախի  
պիր կիւն օլմագ իսէ պիր կիւն ,  
պու մէսլէքլէրինտէն ֆէրաղէթ  
իթմէք իշիւն , Սուլթանտան  
պախշիլէր ալմագ վէ Պապը Ա-  
լիտէ պէօյիւք մէմուրիյէթլէրէ  
կէշմէք միւքեաֆաթընա նայիլ  
օլմագ արգուսընտան իպարէթ  
օլտըղը կապէթամըղտա միւլէա-  
տիտ պէնտլէրլէ տէֆաթլէ կէօս-  
թէրմիշ վէ անլէրին մէնֆաթթ-  
բէք չօգ տէլիլլէրլէ իսպաթ իթ-  
միշ օլտըղըմըղ օգուլանլարըմըղ  
տէրխաթըր իթմէլի տիւրէր :

Իշլթէ կէնճ թիւրքլէրին սէր-  
ֆիրաղը պուլընան Մուրատ պէյ  
նամ ալշագ՝ Սթանպուլտա Տուլուն  
ումումիյէ սապըգ մէմուրլարըն .  
տան օլուպ , չէվիրմիշ օլտըղը  
էնթրիգալար սէպէպի իլէ թիւր-  
քիտան գաշմաղա մէճպուր օլա-  
րագ էվլէլ Մըսըրտա վէ ախիւրէն  
Բարիստէ Միգան նամ պիր  
թիւրճէ կապէթա նէշր իթմէքտէ  
վէ քէնտիսինէ վաթանբէրվէր  
րէնկի վէրէրէք խրիսթիյանլարա  
գարշը իսլամ՝ էհալինին խուսու-  
մէթիւի թէշլիդ իտիճի պէնտլէր  
հաղմագլէ իշլիլլալ իտէր վէ  
կէնճ թիւրքիա նամ գօմիթէնին

